ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Արմէն Մարուքեան, *Հայոց Ցեղասպանութեան Գործով Միջազգային Դատարան Դիմելու Հիմքերն Ու Հնարաւորութիւնները*, Երեւան, Տիր, 2014:

2015 թուականը հայութեան համար պատմական բնագիծ էր նշանաւորում: Հայոց Ցեղասպանութեան 100ամեակը պահանջում էր առանձնայատուկ հայեցակարգային նոր մօտեցում: Հայութիւնը դադարել է զոհ լինելու բարդոյթը կրելուց եւ իր ուսերից դէն է նետել զոհի մաշուած բաճկոնը: Հայութիւնը այժմ աշխարհի առջեւ հանդէս է գալիս իր պետականութիւնը վերականգնած արդի միջազգային հանրութեան լիիրաւ անդամ, իսկ Հայոց Ցեղասպանութեան հարցը ճանաչման դաշտից տեղափոխուել է արդարացի պահանջատիրութեան դաշտ: Հենց սոյն տրամաբանութեամբ է իր մենագրութիւնը շարադրել ճանաչուած պատմաբան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հայոց Ցեղասպանութեան Բաժնի վարիչ Արմէն Մարուքեանը: *Հայոց Ցեղասպանութեան Գործով Միջազգային Դատարան Դիմելու Հիմքերն Ու Հնարաւորութիւնները* վերնագրով աշխատանքը հրատարակուել է ՀՀ նախագահի գործընկեր կազմակերպութեան՝ Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի դրամաշնորհային մրցոյթի շրջանակներում: Գրքի խմբագիրներն են ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտութիւնների թեկնածու Համօ Սուքիասեանը եւ «Օրէնքի Ուժով» իրաւապաշտպան կազմակերպութեան հիմնադիր անդամ Լ. Գէորգեանը:

Գիրքը բաղկացած է առաջաբանից, երկու գլուխներից, եզրակացութիւններ եւ առաջարկներ բաժնից, օգտագործուած աղբիւրների եւ գրականութեան ցանկից, յաւելուածից: Առաջաբանում հեղինակը նշում է, որ յանցագործ պետութիւնը՝ Թուրքիան, ոչ միայն չի ընդունում պատմական փաստերը, այլեւ պետական մակարդակով վարում է Հայոց Ցեղասպանութիւնը ժխտելու քաղաքականութիւն:

Եւ հենց սոյն քաղաքական ուղեգծով Թուրքիան փաստացիօրէն Հայոց Ցեղասպանութեան խնդիրը դուրս է բերել պատմական հարթութիւնից եւ վերածել՝ քաղաքական հարցի: Մի շարք միջազգային կազմակերպութիւններ եւ աւելի քան երկու տասնեակ պետութիւններ արդէն իսկ տուել են Հայոց Ցեղասպանութեան քաղաքական

գնահատականը՝ այն որակելով որպէս ծանր միջազգային յանցագործութիւն:

Սակայն Թուրքիան բնաւ չի ցանկանում համակերպուել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման վերոնշեալ բանաձեւերի հետ, տարաբնոյթ միջոցներ ձեռնարկելով համանման բանաձեւերի արձանագրումն ու վաւերացումը այլ երկրներում թոյլ չտալու համար:

Ուստի, ըստ հեղինակի, հայութեանը որպէս այդ յանցագործութիւնից տուժած ժողովրդի, այլ ելք չի մնում, քան Հայոց Ցեղասպանութեան հարցը միջազգային իրաւական դաշտ տեղափոխելն ու այն միջազգային դատական ատեանում լուծելը:

Աշխատութեան առաջին գլխում («Մարդկութեան Դէմ Կատարուած Յանցագործութիւնների Դատապարտման Դատական Պրակտիկան») քննութեան է առնւում մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւնները դատապարտող միջազգային դատական ատեանի ստեղծման նախադրեալները: Հեղինակը հաշուի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրաւունքում մեծ նշանակութիւն է տրւում նաեւ իրաւակիրառական ոլորտին, ներկայացնում է այլ ժողովուրդների նկատմամբ կատարուած ծանրագոյն ոճրագործութիւնների գործերով ազգային, միջազգային ու միջազգայնացուած դատական ատեաններում կայացած դատավարութիւնների ընթացքը, դրանք դիտարկելով իբրեւ նախադէպեր՝ միջազգային դատական ատեանում Հայոց Ցեղասպանութեան գործով հայցի ներկայացման ու բաւարարման համար:

Այդ կարգի առաջին նախադէպի փորձն արուել է Ա. Համաշխարհային Պատերազմի աւարտից անմիջապէս յետոյ՝ 1918 Դեկտեմբերին, երբ յաղթական տէրութիւնների կողմից ստեղծուած պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտումները հետազօտող յանձնաժողովը առաջարկել է հիմնել միջազգային ատեան՝ Գերմանիայի նախկին կայզերին եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներին ոչ միայն պատերազմական սովորոյթներն ու օրէնքները, այլեւ մարդասիրական սկզբունքները խախտելու դիմաց պատասխանատուութեան ենթարկելու համար:

Ընդ որում վերոնշեալ պատասխանատուութիւնը պէտք է տարածուէր նաեւ Աւստրիայի, Օսմանեան Կայսրութեան եւ Բուլղարիայի վրայ: Ենթադրւում էր, որ ստեղծուելիք միջազգային ատեանի մասին դրոյթները պէտք է ամրագրուէին պարտուած պետութիւնների հետ կնքուելիք խաղաղութեան պայմանագրերում: Իվերջոյ, վերոնշեալ դրոյթները ամրագրուեցին Վերսայի Հաշտութեան

Պայմանագրի 227րդ եւ 228րդ յօդուածներում: Մասնաւորապէս, 228րդ յօդուածում Գերմանիան ճանաչում եւ ընդունում էր պատերազմական յանցագործներին դատելու տէրութիւնների իրաւունքը եւ պարտաւորւում էր նրանց յանձնել մեղադրեալներին: Սակայն, միջազգային ատեանի ստեղծումը առարկայական եւ ենթակայական պատճառներով ձախողուեց:

1920ին Ազգերի Լիգային ներկայացուել է քրէական գործերով միջազգային արդարադատութեան բարձրագոյն դատարանի ստեղծման մասին որոշման նախագիծը, որը նոյնպէս չի ընդունուել այն պատճառաբանութեամբ, թէ դեռեւս գոյութիւն չունի բոլոր ժողովուրդների կողմից ընդունուած միջազգային քրէական իրաւունք:

Մարուքեանը փաստարկում է, որ միջազգային քրէական իրաւունքի բացակայութիւնը խոչընդոտ եղաւ միջազգային քրէական դատարանի ստեղծման ճանապարհին եւ հենց այս հանգամանքն էլ հնարաւորութիւն ընձեռեց երիտթուրք պարագլուխներին խուսափել իրական պատասխանատուութիւնից եւ բաւարարուել թուրքական ազգային ռազմական ատեանում երիտթուրքերի դատավարութեան բեմականացմամբ:

«Ցեղասպանութեան՝ Իբրեւ Մարդկութեան Դէմ Կատարուած Յանցագործութեան Դատապարտումը Ազգային Դատարաններում» ենթագլխում հեղինակը մանրակրկիտ վերլուծում ու պարզաբանում է յատկապէս երիտթուրքերի դատավարութեան գործընթացի էութիւնը թուրքական ռազմական ատեաններում, կատարելով թարմ հարցադրումներ ու բացառիկ կարեւոր եզրայանգումներ:

Պատմաբանը նշում է, որ ժամանակի պաշտօնական եւ ոչ-պաշտօնական թուրքական մամուլում օսմաներէնով հրատարակուել են վերոնշեալ դատավարութիւնների արձանագրութիւնները, որոնք Հայոց Ցեղասպանութեան փաստը հաստատող չափազանց կարեւոր եւ անժխտելի վաւերագրեր են: Միաժամանակ նա փաստարկում է, որ օրուայ թուրքական իշխանութիւնները կամաւոր գնացին երիտթուրքական յանցագործներին սեփական ռազմական ատեանում դատապարտելու քայլին, քանի որ դրանով իսկ փորձում էին կանխարգելել վերոնշեալ անձանց դատելու հնարաւորութիւնը ապագայում ստեղծուելիք միջազգային ատեանում: Հեղինակը միաժամանակ ընդգծում է միւս կարեւոր եզրայանգումը. երիտթուրքերի դատավարութիւնը նախաձեռնողները նպատակադրուել էին ռազմական յանցագործութիւնների մեղքը բարդել բացառապէս Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան վրայ՝ փորձելով այդպէսով պատասխանատուութիւնից եւ վարկաբեկումից զերծ պահել թուրք ազգին եւ թուրքական պետականութեանը: Ակնյայտ էր, որ Հայոց

Ցեղասպանութեան հիմնական կազմակերպիչներին՝ Էնվէրին, Թալէաթին, Ջեմալին, Նազըմին եւ այլոց նախապէս թոյլ էին տուել հեռանալու երկրից, քանի որ այդ մեղադրեալների յանցաքննութեան ընթացքում կը բացայայտուէին բազում փաստեր, որոնք էլ միանշանակօրէն կը յանգեցնէին թուրքական պետութեան պատասխանատուութեանը:

Հեղինակը իրաւացիօրէն նշում է, որ թուրքական պետութեան մէջ արդարադատութեան ձախողեցումը իրականացւում էր պետական բարձր մակարդակով: Ռազմական, Ներքին Գործերի եւ Արդարադատութեան նախարարութիւններում թաքցւում ու ոչնչացւում էին կարեւոր փաստաթղթեր, գաղտնի եւ յուժ գաղտնի համարուող նիւթեր, տեղական իշխանութիւններին արգելւում էր իրականացնել դատական կարգադրութիւնները, մեղադրեալներին օգնում էին թաքնուել արդարադատութիւնից եւ հեռանալ երկրից: Փաստօրէն, սոյն դատավարութիւնը վերածուել էր լաւ բեմականացուած ներկայացման. այն հետապնդում էր հայոց մեծ ողբերգութեանը քաջատեղեակ միջազգային հանրութեանը հանգստացնելու քաղաքական նպատակ՝ ցոյց տալով յաղթանակած Անտանտի Տէրութիւններին, որ "նոր Թուրքիան" իբր պատժում է պատերազմական յանցագործներին:

Հեղինակի խորին համոզումով, իրականութեանը բնաւ չի համապատասխանում այն թեզը, թէ երիտթուրքերի դատավարութիւնը թուրքական իշխանութիւնները կազմակերպեցին Անտանտի, կամ հենց միայն Բրիտանիայի ճնշման ներքոյ, որի զօրքերը յաղթողի կարգավիճակով գտնւում էին Կ.Պոլսում:

Այո, պատմական իրողութիւնները հաստատում են, որ երիտթուրքերի նկատմամբ այդ դատավարութիւնը նախաձեռնուեց բացառապէս ելնելով այն բանից, որ թուրքական պետութիւնը խուսափի միջազգային ատեանից, որը նախատեսւում էր ստեղծել Օսմանեան Կայսրութիւնում պատերազմի ընթացքում կատարուած զանգուածային ոճրագործութիւնների առնչութեամբ:

Աշխատութեան մէջ քննութեան առնելով Սողոմոն Թեհլերեանի եւ Էյխմանի դատական գործերի նշանակութիւնը, հեղինակը մատնանշում է այդ երկու գործընթացների միջեւ եղած ընդհանուր եւ մասնաւոր առանձնայատկութիւնները. Թալէաթի դէմ մահուան դատավճիռը ի կատար է ածուել ոչ թէ նրան դատապարտած Թուրքիայի կամ միջազգային արդարադատութեան, այլ հայ վրիժառու Թեհլերեանի կողմից: Իսկ նացիստական ոճրագործ Էյխմանին առեւանգած իսրայէլական յատուկ ծառայութիւնները ստիպուած էին խախտել Արգենտինայի գերիշխանութիւնը, որպէսզի Իսրայէլի դատարանը

միջազգային արդարադատութիւն իրականացնի Նիւրնբերգի ատեանից խուսափած յանցագործի նկատմամբ:

Մի շարք բաժիններում («Մարդկութեան Դէմ Կատարուած Յանցագործութիւնների Դատապարտումը ad hoc Միջազգային Տրիբունալներում», «Ցեղասպանութեան եւ Մարդկութեան Դէմ Կատարուած Յանցագործութիւնների Դատապարտումը Միջազգային Մշտական Դատական Ատեաններում», «Մարդկութեան Դէմ Կատարուած Յանցագործութիւնների Դատապարտումը "Հիբրիդային"՝ Միջազգային-Ազգային Դատական Ատեաններում»), Մարուքեանը գնահատում, իմաստաւորում եւ ընդհանրացնում է այն փորձն ու փորձառութիւնը, որ մարդկութեանը կուտակել է ծանրագոյն ոճրագործութիւններ կատարած անհատների եւ պետութիւնների դէմ իրականացուած միջազգային ատեաններում: Այդ առումով միշտ արդիական, ուսանելի եւ օրակարգային կը մնան նացիստական յանցագործների եւ ճապոնացի մարտականների դատապարտման դասական օրինակները նիւրնբերգեան եւ Տոկիոյի միջազգային ռազմական ատեաններում՝ ի տես համայն մարդկութեան:

Աշխատութեան երկրորդ գլուխն ամբողջութեամբ նուիրուած է Հայոց Ցեղասպանութեան գործով միջազգային դատարան ներկայացուելիք հայցադիմումի կազմման ու ներկայացման հիմնախնդիրներին ու հնարաւորութիւններին: Ըստ այդմ, հեղինակը մանրամասնում է Հայոց Ցեղասպանութեան գործով ՄԱԿի Միջազգային Դատարան ներկայացուելիք հայցադիմումի բաղադրիչները, որոնք դատական կազմակերպուած դատընթաց սկսելու հնարաւորութիւնները կ'ընձեռեն հայկական կողմին: Վերոնշեալ բաղադրիչները լիուլի բաւականացնում են միջազգային դատական գործընթացի մեկնարկը:

Ըստ հեղինակի, անհրաժեշտ պատմական եւ իրաւական բաղադրիչների միջոցով փաստական հանգամանքների ու ապացոյցների ներկայացումից ու իրաւունքի տեսակէտից դրանց գնահատական տալուց յետոյ հայցադիմումը պէտք է եզրափակուի Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ հայ ժողովրդի կրած կորուստներն ու դրանց հետեւանքներն արտայայտող դատարանին ներկայացուող պահանջներով: Իսկ կորուստներն ու հետեւանքները պայմանականօրէն բաժանւում են հետեւեալ խմբերի. ա) Հայրենազրկում, բ) Մարդկային կորուստներ, գ) Մշակութային ժառանգութեան կորուստ, դ) Նիւթական կորուստներ: Սոյն չորս խմբերի վերաբերեալ պատմաբանը աշխատութեան էջերում հանդէս է գալիս որոշակի փաստերով ու փաստարկումներով: Այնուհետեւ քննութեան է առնւում ՄԱԿի Միջազգային Դատարանում Հայոց

Ցեղասպանութեան գործով դատական ընթացակարգերը եւ որոշման հնարաւոր տարբերակների հաւանականութեան ընթացքը:

Ընդ որում, նշում ու հիմնաւորում է, որ Հայոց Ցեղասպանութեան գործով ՄԱԿի Միջազգային Դատարան դիմելու գործընթացը պէտք է լրջօրէն նախապատրաստուած ու ապահովագրուած լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարուող քաղաքական գործընթացով:

Աշխատութեանը կից յաւելուածում դիտարկւում է Թուրքիայի հրահրմամբ եւ աջակցութեամբ քեսաբահայութեան նկատմամբ (Մարտ 2014) կատարուած յանցագործութիւնների քննութեան հնարաւորութիւնը Միջազգային Քրէական Դատարանում:

Որպէս այս ամէնի ամփոփում եւ եզրայանգում, պիտի արձանագրենք, որ վաստակաշատ պատմաբան Արմէն Մարուքեանի սոյն աշխատութիւնը նոր, թարմ խօսք է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման գործը իրաւական հարթութեան վրայ կառուցելու եւ այդ կերպ յետագայ պայքարը շարունակելու առումով:

Պատմաբանը բարեխղճօրէն ուսումնասիրել է միջազգային իրաւական ու դատական առկայ վիթխարի փորձը եւ նշել այն մեթոդներն ու ուղիները, որով պէտք է ընթանայ յանուն հայոց պահանջատիրութեան մղուող արդարացի ու անբեկ պայքարը:

ԱՐՄԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
erevan-51@mail.ru